ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 մայիսի, 2017 թ.)

«Սէր ոչ երբեք անկանի»
(Ա. Կորնթ. ԺԳ. 8)։

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր Պողոս առաքյալի այս խոսքերը որոշեցի ընտրել որպես խոսքիս ուղեցույց Երկրապահ կամավորական միության տոնի առիթով մատուցվող այս Սուրբ Պատարագին՝ «սերը երբեք չի՛ կորչում, չի՛ ոչնչանում»։

Սիրո մասին բազմաթիվ իմաստուններ են գրել, ներբողներ հյուսել, գովերգել սերը։ Դասական գրականությունը լեցուն է սիրո փառաբանության ստեղծագործական նշումներով, որոնցով դարեր շարունակ հիացել են մարդիկ, ոգեշնչվել, հուզվել, ապրել և արարել։ Սիրո դասական հիմնը, սակայն, շարունակում է մնալ Քրիստոսի լույս վարդապետությամբ աշխարհ բերված պատգամը. «Սերը երբեք չի բարկանում, չի նախանձում, չի չարախոսում, չի չարախնդում, սերը զոհողություն է» (Հմմտ. Ա. Կորնթ. ԺԳ. 4-5)։ Ոչ ոք չունի ավելի մեծ սեր, քան նա, ով զոհում է կյանքն իր ընկերոջ համար (Հմմտ. Հովհ. ԺԵ. 13)։ Այսպիսի ձևակերպումներ է ստացել սերը Սուրբ Գրքում։

Սիրո գովերգումն այսօր ընտրեցի որպես բնաբան իմ խոսքի, որովհետև դարեր շարունակ սերը եղավ շարժիչ ուժը մեր հայրենյաց պաշտպան քաջամարտիկների՝ հայրենիքի նկատմամբ իրենց զգացումներն արտահայտելու ճանապարհին։ Ավարայրից մինչև Սարդարապատ, Սարդարապատից մինչև Հայրենական մեծ պատերազմ, Հայրենական մեծ պատերազմից մինչև Արցախյան հերոսամարտ։ Սերը և միայն սերը

եղավ շարժիչ ուժը հայրենասեր մեր զավակների: Այս սիրով, հայրենիքի նկատմամբ անմնացորդ և անսակարկ սիրով Երկրապահ կամավորական միության մեր քաջարի զավակները մեկնեցին սահման՝ մեր երկիրը պաշտպանելու:

Ես այսօր դասական գրողներից ու տեսաբաններից չէ, որ կամենում եմ մեջբերել պատերազմի սարսափները նկարագրելու համար: Կբավարարվեմ մի քանի տող ընթերցելով 22-ամյա մի աղջնակի հուշագրությունից, ով ծնվել և ապրել է պատերազմի ողջ սարսափները՝ գտնվելով Լեռնային Ղարաբաղում՝ մեր նվիրական Արցախ աշխարհում: Այդ աղջիկը Նարինե Վարդանյանն է: Նա իր հուշագրության այս գլուխը վերնագրում է այսպես՝ «Ինձ պարտադրված պատերազմը». «Ես ծնվել եմ այն տարում, երբ, ասում են, խաղաղություն պիտի հաստատվեր Մոսկվայում ստորագրված մի թղթի կտորով: Երբ ես ծնվում էի, հայրս դիրքերում էր ու մորս հիվանդանոց տանելու ժամանակ չուներ: Իսկ ես որոշել էի ծնվել մի ամիս շուտ: Շրջանի միակ հիվանդանոցում լույս չէր եղել, ու ջուր տաքացնելու համար փայտի վառարանի մեջ գցելու փայտ էին ուզել ծննդաբերող մորից: Պատերազմի ժամանակ ինձ ո՞վ էր իրավունք տվել ժամանակից շուտ ծնվել: Արկի բեկորը վնասել էր օրորոցիս մի ոտքը: Տատս հիշել էր, որ օրորոցում, որի տակ կծկվել էր պայթյուն լսելուց հետո, ես եմ քնած: Ես արթնացել ու լուռ նայել էի տատիս: Ու ժպտացել էի: Տատս լաց էր եղել՝ օրորոցիս մի ծայրը գրկած: Ես ապրել էի: Ու թվում էր՝ մենք պատերազմի ժամանակ ծնված վերջին սերունդն ենք, բայց պատերազմը պարտադրելու էր ինձ ծնվելուց բացի նաև ապրել պատերազմի ժամանակ: 22 տարի անց՝ իմ տարիքի չափ անց նոր մի սերունդ պիտի խլեր մեր՝ պատերազմի ժամանակ ծնվածներիս «պիտակը»:

Այո, դժբախտաբար, պատերազմն այսօր շարունակվում է, և չի ավարտվել առաքելությունը հայրենիքը պաշտպանող զինվորի, Երկրապահի, ում առաքելությունը հայրենիքը, երկիրը, մեր ծնողներին, եղբայրներին և քույրերին պաշտպանելն է: Հայրենիք ասվածը պարզ մի հասկացություն չէ: Հայրենիքը պարզապես բնակավայր չէ, որտեղ ապրում ենք, հայրենիքը մի աշխատավայ չէ, որտեղ հայթայթում ենք հանապազորյա հացը: Հայրենիքը կենսատարածք է, որը նախապայմանն է և երաշխիքը մեր լինելիության և ինքնության: Հայրենիքը մեր ծնողն է՝ մեր հայրն ու մայրը, մեր երեխան է, մեր զավակը, հայրենիքը, ի վերջո, մեր հավատքն է, արժեքների այն ամբողջությունը, որը մենք կոչում ենք սրբություն:

Դարեր շարունակ մենք կարող էինք պահպանել մեր ֆիզիկական գոյությունը, կարող էինք զրկանքներից զերծ մնալ, եթե հանձն առնեինք հավատափոխություն, փոխելու մեր կյանքի կերպը, բայց մենք անվհատ պայքարեցինք, որպեսզի պաշտենք մեր Աստծուն, ապրենք մեր նախընտրած ձևով, և այսօր այդ պայքարը շարունակվում է: Երկրապահը, որի տոնն է այսօր՝ մայիսի 8-ին, ահա լծված է եղել այս առաքելությանը և մաքառումին: Եվ այս առաքելության գնահատումով է, որ տարիներ առաջ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այս օրը հաստատվեց որպես Երկրապահ կամավորականների միության օրհնության օր: Եվ այս առիթով ի խորոց սրտի իմ շնորհավորանքներն եմ բերում բոլոր երկրապահներին, մեր ժողովրդի բոլոր զավակներին, պատանի, երիտասարդ, տարեց բոլոր երկրապահներին, ինչպես իրենք են սովոր անվանել՝ եռասերունդ երկրապահներին:

Մեր հայացքն ուղղվում է նաև դեպի մեր սահմանները, աղոթում ենք ապահով ծառայության համար մեր զինվորների, ովքեր այս պահին ևս շարունակում են հսկել մեր սահմանները:

Տիրոջ սերը, օրհնությունը ձեզ և մեզ հետ այժմ և հավիտյանս. ամեն: